

03.10.23 - 06.10.23

09:00

Անցանց

Գրանցումը բաց է



[Պահպանել Google օրացույցում](#)

ԵՊՀ պատմության ֆակուլտետի դահլիճ

Մյունխենի համալսարանի պատմության ու արվեստի ֆակուլտետի Ռուսաստանի և Ասիայի պատմության ամբիոնի և Երևանի պետական համալսարանի պատմության ֆակուլտետի համագործակցության շրջանակում կազմակերպվում է «Ենթակառուցվածքները Կովկասում 19-րդ դարի սկզբից մինչև ուշխորհրդային շրջանը» խորագրով միջազգային գիտաժողով, որը տեղի է ունենալու **ս.թ.**

հոկտեմբերի 3-6-ը, ԵՊՀ պատմության ֆակուլտետի դահլիճում:

Աշխատանքային լեզուն անգլերենն է (առանձին դեպքերում կդիտարկվեն նաև գերմաներեն և ռուսերեն զեկուցումներ):

Մասնակցության համար անհրաժեշտ է մինչև մայիսի 1-ը

arpine.maniero@collegium-carolinum.de և h.holzberger@lmu.de էլիասցեներին ուղարկել 500 բառի սահմաններում զեկուցման ամփոփագիրը և աշխատանքային կարգավիճակի մասին տվյալները (նամակում CC նշել ԵՊՀ պատմության ֆակուլտետի էլիասցեն՝ history@ysu.am):

Չեկուցումների թեմատիկան ընդգրկում է հետևյալ ոլորտները.

1. «Ենթակառուցվածքներ և միգրացիա»,
2. «Տրանսպորտային ենթակառուցվածքների կառուցումը և շահագործումը»,
- 3.«Ենթակառուցվածքները՝ սոցիալ-մշակութային և մարդաբանական տեսանկյունից»,
4. «Ենթակառուցվածքները՝ անդրկայսերական/անդրազգային համատեքստում»,
5. «Ծովը և ցամաքը կապող ենթակառուցվածքները»,
6. «Ենթակառուցվածքները և շրջակա միջավայրը»:

Գիտաժողովից հետո նախատեսվում է զեկուցումների տպագրություն:

Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, 0025, Ալեք Մանուկյան 1
(+37460) 710000

info@ysu.am